



Կ Ո Ն Դ Ա Կ ԱՄԱՆՈՐՅԱ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՐԴՈՐԻ

ԳԵՂՈՐԳ ՇԱՌԱՅԻ ՅԻՍՈՒԽԻ ՔՐԻՍՏՈՍԻ, Ո ՂՈՐԾՈՒԹԵԱՄԲԻ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՎ ԿԱՄՍՔ
ԱԶԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ԿԱՄՊԻԼԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ, ՄԱՅՐԱԴՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք
ՀԱՄԱՅՆՅԱՆ ՆԱԽԱՄԵՆԱՐ ԱՔՈՒՈՅՆ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱԽՈՎՔԵԼԱԿՈՅՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՐԲՈՅ ԷԽՍԻՄՈՅՆԻ

Հայաստանյաց պագային Առաքելական Սուրբ Եկեղեցու ավանդապահ հոգեոր Դա-
սին և առաքինազարդ ողջ պաշտոններյան,

Հայ ազգային մշակուրային հաստատությունների և աստուածահան այլ հիմնար-
կուրյունների բազմերախու ղեկավարներին և անձնվեր աշխատավորներին,

Մայր Հայաստանի հայրենաբնակ Երջա նիկ ժողովրդին և տարաբնակ ու հայրենա-
տենչ հարազատ զավակներին,

Անօրինաբար բռնատիրյալ և առմամապես արդարական հայրենի Տենչավայրերին ու
պատանելյալ-գերելվարյալ ողջ հարազատներին,

Ամանորյա ողջույն Հայրական և օրինուրյուն Հայրապետական:

Անսկիզբն և անվախնան ժամանակը մի տարեշրջան և բռնուեց այսօր:

Դարավոր անցյալից նվիրագործված, ընդ-
հանրական հավատարիմ հնամյակի վերջա-
լույսի և ամանորի արշալույսի անկրկնելի
հանդիպման ու անվերադարձ անշատման
այս խորհրդավոր պահին՝ ի խորոց սրբի
Հայրապետական ամանորյա ողջույն են՛
ինում Քե՞զ, ազատագրված և գերիշխան
Մայր Հայրենիք, և Քե՞զ, սբանչելազործ ու
հեռոսածին Հայ ժողովուրդ:

Ամանորյա սրտաբուխ ողջույն և Քե՞զ,
Աշխատանքի ազատագրուրյան, ժողո-
վուրդների եղբայրուրյան և միշազգային
խաղաղուրյան մեծազոյն պաշտպան Սովե-
տական անպատճի հոգու Միուրյուն: Մեր
երախտագետ ժողովուրդը երեք չի մոռանա,
որ Քո եղբայրական հովանու ներքո, Քո
անդավանան պաշտպանուրյամբ ավերակ-
ներից ու գերեզմաններից զլովս բարձրաց-
րեց, վերածնվեց և բարգավանեց բազմա-
դարյան ու բազմաշարշար Հայ Հայրենիքը.
Ճնունդ առավ, ամրապնդվեց և հզորացակ
Սովետական Հայ Պետուրյունը, համազգա-
յին անխուսափելի մահվան օրհասի մղա-

վանչից ազատվեց, փրկվեց ու Երջանիկ
կյանքի ուղին ընդգրկեց, պատմուրյան եր-
բեմնի խորը ու հալածական զավակ, Հայ
ժողովուրդը:

Ամանորյա անկեղծ ողջույն հաև Ձե՞զ,
Երավախոն ու արդարամիտ, դիմոկրատիկ
և խաղաղասեր Եկեղեց, ու ազնվորնեն ծա-
ռացել եք ընդդեմ աշխատանքի շահագործ-
ման, ազգային հալածանքի, պատերազմի
հրձիգուրյան:

Հնամյակի հավետ անհայտացման և ա-
մանորի սկզբանավորման այս բազմախոր-
նուրդ ժամին, ամանորյա հայրական ողջույ-
նիս հետ, Հայրապետական հորդորակս եմ
ինում Քե՞զ, իմ սիրեցյալ հայազն հարա-
զատ ժողովրդիս:

Ամանորի արշալույսին հարկ ու պատշան
իմաստուրյունն ունենանք հստակուեն
պատկերենու հավիտենականուրյան գիրկն
ընկած անցյալի փորձերը և ազգովին գի-
տակցիւու, խաղաղավառ հույսերով ու դառն
հիասքափորյամբ հարուստ, այդ անցյալի
բոռած ուսանելի դասերը:

Անցյալի փորձերի և դասերի գիտակցելն
ու իմաստավորելը անհածեշտ նախապայ-

4

մաճճ ու ելիմբն է Հայ ժողովրդի կարգազի ոռշաման, ազգային-եկեղեցական մեծ իրենդիքսերի օրինական կարգավորման և արդարացը ու շիտակ լուծման:

Որո՞նք են ազգային-էկեղեցական այն
մեծ խնդիրները, որոնց օրինապատճեն
կարգավորումը և արդարացուած վեռահատու-
մը հանապազօրյա մտահոգությունն է լու-
սավորչակիմն Մայր Արքունի և Ամենայն
Հայոց Ազգընատիր ալեքարդ Հայրապետին,
որին Հայ տոնմային պատմությունը վիճա-
կել է Կրոնապետի մեծ ու պատասխանառու
կողմամբ:

Արտեմի կողմէաւ ազգային-հիմնական այն մեծ խնդիրները, որոնց հաղթահակի հիմնական գրավականը ողջ Հայության հավաքական իմաստուրյունը և միանական կամքն է հանդիսանալու:

Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՅ ԱԳՐԱՅԻ ԱՐԴՅՈՒՆ-
ՎԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԻԿԱՅՈՒ ԱՎԱՄԻՒԱԿԱՆ Վ-
ՀԱՅԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԿՎԻՐԱԿԱՆ ԳԵՐԻԵԽԱՆՈՒ-
ԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՐԲԱՋԱՆ ՄԻԱՄԱԿԱՆՈՒ-
ԹՅՈՒՆԸ:

Հայ ժողովուրդը և իր քաջարի ղեկավար
ները, Հայ Եկեղեցին և իր առաքինազարդ
Հայրապետները դարեւ շարունակ, անօրի-
նակ հերոսուրյամբ, պաշտպան են կանգնել
Հայ ժողովրդի ազգային-կրոնական այդ
սրբազն արժեքների և իրավունքների:
«Յայսմ համառող զի՞նզ ոչ ոք կարէ խախ-
տել, ոչ հրեշտակ և ոչ մարդիկ, ոչ սուր
և ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զի՞նչ և են
դառն հարցածք»: Ազգային-Եկեղեցական
Մեծ ժողովի նվիրագործիած և ոսկեղծիկն
Եղիշեի ավանդած այս նշանարանին հավա-
տարիմ՝ ավելի, քան 1500 տարի հահատակ-
վել է Հայ ժողովուրդը, մարտիրոսացել է
Հայ Եկեղեցին այդ արժեքների—իրավունք-
ների պաշտպանության դիրքներում, զար-
մանք և հիացմունք պատճառելով համայն-
մարդկության: Ավարայրի փառապան նա-
կատամարտից մինչ այսօդ Հայի համաժո-
ղովրդական հերոսամարտերը անվերջ և
սրտառուց շարան են հայ մարդու բարոյա-
կան տոկունուրյան, դիմադրության կորովի,
ազգային անվեհերության, կրոնական նա-
խանձախնդրության:

Հայ մարդ, հավատարիմ մնա քո երանելի
ճախճյաց ավանդներին և բարձր ու անվիտ
պահպանիր ազգանվեր եկեղեցու վեհիրա-
փորյունն ու գերիշխանությունը արտաքին
քենարին ամեն մի ոտնձգությունից և ըգ-
գույց եղիր գառնազգեստ գայլերից, որոնք
փորձում են առեւելուր շահաստացուրյան

սին խոստումներով գայրակնեցնել ոս միա-
լը, խոռվել ոն հոգին և ոսայնել ոն խիսեր:
«Ձզոյշ Երու ի սուս մարզարէիցն, որ զան
առ ձեզ հանդերձիս ոչխարաց, և ի եերոյ
են զայլ յափշտակողի: Ի պարոց նոցու
ծանիչիք զնոսա: Ելի՞ր ժաղիցին ի փշոց
խաղող կամ ի տատակէ՝ բուզ» (Մատթ. է
15—16):

Մայր Արքու հավատացած է, որ անցյալի դառն փողձուրյուններից իմաստնացած Հայ ժողովուրդը, բունավոր ոսպե ապուրի համար երեխ անուրդի չի հանի իր ազգային-կրոնական ավագուրյան սրբազն իրավունքը, որ ձեռք է բերված, պաշտպանված ու պահպանված անօրինակ համատեկուրյան, աննման մարտիրոսագրուրյան այնպիսի քանզ գնով:

Հայաստանյայց Առաքելական Ս.Ծայշին
Եկեղեցու ազեղի զավակեն՝, հավատարիմ
ձեր առաքինաշատ նախնյաց սրբալոյս
հիշատակին՝ միասիրու ու միակամ ծառացե՞ն
այն բոլոր անպատճախանառու կենարնեա-
խուս ույժերի դեմ, որոնք հատուածական
իշխանակալուրյան, անհատական փառա-
տենչուրյան հոգի տրամադրությաններից
կուրացած մոլեզին փորձեր են անուն հիմ-
ները փորելու ազգային եկեղեցու սրբազն
միասնուրյան և բակտեր-ջատելու ազգա-
յին-կրօնական դարավոր ուխտն ու հոգե-
վոր դաշինքը: Աշխարհակալական ախտով
տարված ուզմամոլեների անհայտնիքաց դա-
վերի այս խռովահույզ օրերին ավելի բան
երբեք բարձր գնահատեցեք, ամրապնդեցեք
ու պաշտպանեցեք Հայկազյան ազգային-
եկեղեցական միասնուրյան հիմները:

Հայակն հավատացյա՛լ, քաղաքական
իմաստուրբյուն և բարոյական մեծորյուն ու-
նեցիր պատշաճազոյն արժեքավորելու
հայրենական եկեղեցու սրբազն Վեհո-
րյունը, այլ և ազգվորյուն ու արիուրյուն՝
կարգի երավիրելու բոլոր երանց, ոռոնք ի-
րենց անվատասխանառու գործունեությամբ
միլինավոր հայ նախատակների նվիրական
արյամբ սրբագրութված ազգային եկեղեցին
փորձում են վերածել քաղաքական նամար-
տակուրյան բմբակայր - հանդիսարանի:

Հայաստանի Ազգային Առաքելական
եկեղեցու միանությունը—նախաչումն է Ս.
կյմիածնի Մայր Արքովի լոգիաներական ու
նախամեծար իշխականության, ազգային-
կրթական դավանության ու ավանդների
նախանձախնդրության, եկեղեցական ճվի-
րապետության և վարչական կարգապահու-
թյան ու հնագանեղության:

Ինչնախարեություն է, և այն շատ վտան-

գավոր, կարծել թե Ամենայն Հայոց Կարպուհիկոսի անվան հիշատակումը պատրազի ժամանակ և կամ այլ առիրենով սին հավատիացումը ազգային-եկեղեցական հավատարմուրյան, Երաշխիք է և ապացույց ազգային-եկեղեցական միասնուրյան: Հայստանյաց սպազմին Առաքելափան Եկեղեցին հոգեոր, դրական-ինդանի միասնուրյուն է և ոչ Երբեմ սին խոս, առարկազուրկ հավատիացում: Խոսն ու խոսումը, առանց կենդանի գործի, իրական գործողուրյան մեջալ է և անարժել:

Հայ Սպազմ իր բազմադարյան պատմության և գոյուրյան բախտորոշից շրջանն է ապրում այսօր. իսկ Հայ Ազգային Եկեղեցին Մայր Հայրենինում իր հուսադրից զարդեն է երկնում: Ազգն, առավել բան երբեմ, ու Եկեղեցին այսօր Եղբայրական համերաշխուրյան և ազգային-եկեղեցական միախոնուրյան ու միակամուրյան աներածշուրյունն են զգում: Ազգային-Եկեղեցական Եղբայրական անխոզելի համերաշխուրյան միախոնուրյունն ու միակամուրյունը բարոյական մեծ ույժ է, որ ընդունակ է հարգանք ու ակնածանք ներշնչել հաշուուաց, անգամ թշնամյաց: Արդի սերունդը մեծագույն պատասխանառվուրյունն է ունենալու ազգային-եկեղեցական գանձերի, հոգեոր արծեների անվրա պահպանության և անձնվեր պաշտպանուրյան համար ո՞չ միայն ի հարգանք Հայ Ժողովրդի անքանամար համատակների ու մարտիրուների, որոնք իրենց առաջինի կյանքն են ողջակիզել հանուն այդ բարոյական գանձերի, նոգեոր արծեների: Արդի սերունդը մեծագույն պատասխանառվուրյունն է ունենալու նաև հանդիպ գալոց նոր սերունդների, որոնք լիիրավ պահանջատերերն են հանդիսանալու այդ բազմադարյան գանձերի և արծեների:

Ցավ է մեզ արձանագրել, որ տակավին իր ավարտական ձեւակերպումը չի ստացել ամերիկանայ «ի Վարչական» անշատյալ համայնքի վերադան ու նոգեոր հաղորդակցուրյունը համազգային-Եկեղեցական, Վարչական, նվիրապետական միասնուրյան շարժեռում: Ցավ է Մեզ արձանագրել, որ բացառիկ-անմեղ լուր է հասել անշատման սպառնալիքի՝ սակավարիկ խմբակն անունից, որն իր անպատվարեր սպառնալիքը փորձում է արդարացնել անարժան բահանայի օրինական կարգարուժման պատրվակով: Ով սպառնալիքով է խոսում Հայստանյաց Ազգային Առաքելական Եկեղեցու և Մայր Արոնի հետ, նա արդեն իսկ անհա-

րազատ է և խոր ազգային-եկեղեցական վեհարակուրյան և հոգեօր միասնուրյան: Հայ Ազգային Եկեղեցու դարավոր անցյալը նշատապատում վկայարաբնում է, որ վաղ բարձրադարձած սպասում է դափառի ու ազգային դիմագրկման անփառունակ վախանքը: Իսկ Հայաստանյաց Ազգային Եկեղեցին, ազգատագրվելով նոգով անհարազատ տարրերից, էլ առավել նատառում և վատահ շարունակել է իր բազմադարյան ազգանվեր փառապահ ուղղութեան ուղին:

Միածնական Ս. Տանարիս ավագ սեղանի առաջ ծերակից ձեր ալիքարդ և ազգատակամ միաձայնուրյամբ ազգը նույնից Հայրապետը ի խորց սրտի աղերսափին աղորքն է վերառաւում Ամենահակարողին՝ իմաստուրյան շնորհը պարզեցնու և համերաշխուրյան ոգին ներշնչելու հայ հավատացյալին՝ ի փառ և հանսասանուրյուն ազգային - Եկեղեցական անմակնելի միասնուրյան:

Բ. ՀԱՎԱՏԱՅՅԱՆ. ԺՈՂՈՎՈՒԹՅՈՒՆ, ՈՐՊԵՍ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՄՔՈՂԶԱԲԻԹՅՈՒՆ, ԿԵՆՍԱՏՈՒՐ ԱԴՐՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԵԱՌՏԱԿԵԼԻ ՀԻՄՔՆ Է ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՅՈՒՆ:

Հայ Եկեղեցը Վարչական անշունչ-անկենդան իմանակարուրյուն չէ, այլ ընդհանուր բնուրական իրավունքի և ժողովրդի իմաստում, ազգա կամքի արտահայտուրյան վերա հաստատված կենդանի հաղորդակցուրյուն և միասնուրյուն: Սակայն ժողովրդական կամքի արտահայտուրյունը լինելու է օրինապատշաճ կարգով և համաձայն Հայաստանյաց Եկեղեցու սահմանադրական իրավունքի և դրավեր ավանդների՝ անվերապահ մասնակցուրյամբ բոլուս նայ հավատացյալների, անկախ սեղից, նպատակուրյունից, բաղադական համոզմունքներից, բացառուրյամբ հոգեոր արտավորյալների:

Հայ Ազգային Եկեղեցու միասնուրյան աներածիչուն նախապայմանն է ոչ միայն անվերապահ հանաշումը Մայր Արոնի և Ամենայն Հայոց Կարողիկոսի նախամեծարուրյան և ընդհանրական իրավասուրյան, այլ և անվերապահ հանաշումը տնդական Արոռեների և Թեմերի իրավասուրյան: Հայ հավատացյալը, ինչ դիրք է լի նա վայելի, ուր որ էլ գտնվի, պետք է միշտ զգա և զիտակցե, որ Արոռակալ և Թեմակալ իշխանուրյունները ոչ միայն դեկանունների են մասնակուրյունների, այլ և համաձայն Եկեղեցական-կանոնական իրավունքների, օրինական ներկայացուցիչ-

ներն են Հայաստանյաց Ազգային Սպահելական նկեղեցին զբարորդ Նայր Արքով և այդ նկեղեցու ընդհանրական միասնությունը արտահայտող ու դեկապարող Ամեայն Հայոց Ազգային Կարողիկոսի: Տեղական Արքուների և Թիմերի ազգային նոգուրիչանությանց որոշումները ենքակա հօգատարման, և անդ դու չեն կասեցված և առկայված օրինական կարգով: Անդիշխանարար և կամայականուն հակառակին ազգային-եկեղեցական օրինական իշխանությունները որոշումներին, նշանակում է խարիսկ հիմունքները Հայ նկեղեցու նոգուր-վարչական, նվիրապատական միասնության: Եղեք շրջահայաց և իմաստուն՝ արժանավորաներին ընտրելու, եղեք նախանձախնդիր և զորավոր՝ ընտրյալներիդ օրինական և արդարամիտ գործունեության և միաժամանակ առաջինությունն ունեցեք ձեր խնկ ընտրած ազգային-եկեղեցական իշխանությունների որոշումները ազնվարեն կենսագործելու: Այս է լինելու միակ օրինական, արդար և իմաստուն վարչակից հայ հավատացյալի, եթե միայն ոչ խոսելով, այլ կենդանի գործով է հավատարիմ Ազգին և Սկեղեցուն: Բարին ընտրեցեք և շարը մերժեցեք, միշտ երշերով նրանելի Հայրապետի՝ Հովհան Մանդակունու իմաստուն նախազգուշացումը. «Այգոյ, որոյ չէ պարփակ գաղաքեք մտեալ ապականեն զնա»:

Գ. ՀԱՅ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՏԵՆԶՈՒԼԻ ԱՄՄՈՒՂԱՍ-ՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՊԵՏՈՒ-ԹՅԱՆ ՏԵՏԵՍԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ՀՅԱՐՄԱՑՈՒՄԸ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՄՐՑՈՅՆ է ԼԻՆԵԼՈՒ ԱՄԵՆ ՄԻ ՀԱՅ ՄԱՐԴՈՒ:

Հայ ժողովրդի անձնվեր և բաջարի զավակները սերունդներ շարունակ և առատորեն իրենց սրբազն արյունն են բափել և իրենց ազնիվ կյանքն են զոհաբերել Միացյալ Հայաստանի և Հայրենիքի ամբողջացման և Հայ Պետության նվիրական գաղափառների հայրանակի համար: Ով բանիվ թե գործով, ուղղակի թե անուղղակի մեղանչում է Հայրենիքի ամբողջացման և Հայ Պետության նվորացման դեմ, ևա զինակից է հանդիսանում Հայ Ազգի ու Հայրենիքի դարավոր բը-նամուն, որը դիվային ծրագրեներ է նյուրուն, աշխահակալ մեծերին թիկնած՝ անպատճ բռնտիրել մեր սիրեցյալ Հայրենիքը և մեկ ընդ միշտ բնաշնչել Բնաշխարեն ողջ Հայությունը:

Մեծ Դատեր իրենց արդար լուծման համար ժողովուրդներից ու Կառավարություններից պահանջում են մեծագույն իմաստու-

րյուն և շրջանայեցողություն, ոյժ և կորով: Այ ժողովրդի և Հայ Պետության մեծագույն հոկանավորն ու հարազար պաշտպան Սովետական հզոր Միությունը ու առավելագույն առաջնային առաջնորդության ստուգավաճառը է այդ առաջինություններով: Հուսալիքը տարակույսները վերացվելու են մեկ ընդ սրշա և ամենայն վեռագանության մը ասմինն էին հայ ազնիվ սրտերի երեկով արդարագույն հուսակերը և սրտառության համար համարական առաջարարական առաջարարության համազգացմամբ, ևս առավել աճեմն են դառն հրասրափոր-րյան և բարոյալիքան մասնակի արտառայա-տությունները համազգային տեսչանդի հաղ-րանակի անուսալիության շարագուշակու-րյան: Հայ ժողովուրդը համազգայնուն և անվիան տկուսությամբ շարունակելու է իր սրբազն պայտարը հանուն հայրենա-կան արդար Դատի օրինական վեռահատ-սան:

Միր և գորգուրանքի, ակնածանքի և հիացմունքի սրբություն և սրբոցն է հան-դրսանալու մեր ազգային և ոպյունական կետությունները՝ Սովետական վառապան Հայաստանը: Սովետական նեծ Միության պաշտպանության ապավինած, նուս ազնիվ ու բաջարի ազգի ամենօրյա օգնությունը վայելելով, սովետական բոլոր ժողովուրդ-ների եղբայրական անշահանդիր աշակ-ցությանը արժանացած, սովետական հրա-սեանց մեծ ընտանիքի եղբայրակցության կենսաւու և փեկար շունչը շաշելով, հաշ-խարի հայությունը իր ազգային Պետու-թյան հիմերն է կերտու ու ամրապնդու- և հրաշագործու ու պայծառազարդում հայ- րենական սուրբ օջախը, որի լուսի և զեր- մուրյան ույժով այսօրվա սերունդը անօրի- նակ բափով ու հաննարով դարբնում է ոչ միայն իր, այլ և զալոց սերենդների երջան- կությունը: Արդարացակ մի շաբ խոշոր պետությունների անցյալի ժաղամական գոր- ծիններից շատերի այն իմաստուն կանխա- տեսությունը, թե Հայաստանի և Հայ ժողո- վրդի փրկության գրավականը Մեծն նու- սաստանի պաշտպանության և նուս ժողո- վրդի բարեկամուրյան մեջն է: Հայրենիքի, Հայրենական Պետության և հնաշխարի Հայության այսօրվա զինակը արդարացուն ու կենսագործուն է Սովետական Միության Մեծանուն Առաջնորդ Գեներալիսսիմուս Ստալինի մարգարենության. «Տանջված և բազմաշարար, Անտառտայի և դաշնակների ողորմածությամբ սովի, ավերի ու զաղրի մատնված Հայաստանը, — այդ բոլոր բարե- կամներից» խարված Հայաստանը այժմ իր

փրկուրյունը գտավ նրանում, որ հայտարարեց իրեն Սովետական Երկիր։ Մեր Հայրենիքը, Հայրենի Պետուրյունը և մայրենի ծողովաւրդը իրենց ստեղծագործական աշխատանքով, մշակուրային վերելով, կենցաղային բարգավաճմամբ, հեռուսական նկարագրով՝ հիմացմունք ևն պատճառում և ակնածանք ներշնչում բոլոր նրանց, որոնք ակնածանք են դառնում մեր Հայրենիքի և ժողովրդի աշխատանքին, պայքարի և ըստեղծագործության։

Ով անկենուրեն սիրում է մեր Սպառ և պաշտում մեր Հայրենիքը, նա պարտավոր է զորավիզ հայի հայուսանալ հայրենի Պետուրյան՝ Սովետական Հայաստանին։

Ցավ ի սիրու պես է հիշատակենք, որ, թեև սակավարիվ, բայց և այնպես ի մեծ դժբախտություն և անպատվություն մեր ազգային նկարագրի՝ հայանուն մարդիկ կան տակավիչ, որոնք մոռացուրան տալով պատմության դառն, ողբերգական դասերը, դավեր են լարում հայրենի Պետուրյան դեմ և պատրաստ են անօամ զինակցել քշնամական ույժերի մեջ՝ վերականգնելու այն կարգերը, որոնք անխուսափելի ուրեմն պատուանելու են մեր ծողովրդին և ավերածելու մեր Հայրենիքը։

Յուրաքանչյուր ազնիվ հայի առաջնակարգ և սրբազնություն պարտականությունն է մերկացնել, իսպան չեղոքացնել Սովետական Հայրենիքի, Հայ ժողովրդի քշնամիներին, հայադակ ոյժերին ու զարդիչներին։

Օգնել Հայ ժողովրդին և զորավիզ լինել հայրենի Պետուրյան, սրբազն և հրամայական պարտականությունն է ամեն մի ազնիվ հայ մարդու, հայ հայրենասերի։

Դ. ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅՐԵՆՍԴԱՐՁՈՒ:

Մեր հայրենի հարազատ իշխանությունը բացել է Սփյուռքի տարագիր Հայուրյան առաջ Հայրենիքի դոները, որով ոչ միայն ազատում է Հայ ժողովրդին անխուսափելի ձուլման և ազգային դիմագրիման, օտարության մեջ հյուծվելու և անհանալու մեծ վտանգից, այլ և լիակատա հնարավորություն բնակում բվով անելու, ֆիզիկական գորանալու հայրենի հողի վրա, գոտեպելիքած կուլտուրական ու տեխնական մեծ հաղրանակներ տարած և վերելի համբան բռնած հարազատների մերձավորությամբ, նոր զարկ ու բարի տալու հայ մշակուրի անհայրներց զարգացման, հայ ժողովրդի բարեկեցության և ազգային հնարության ամեապրեմիան։ Հայ ժողովրդի պարտականությունն է ամեն ինչ ստորադասել Սպառա-

փաման, Հայրենադարձի նվիրական գաղափարի կենսագործման։

Այսպես էինք արժեքավորել Սփյուռքի Մեծ Հայրենադարձը մեր ողջույնի գրությունների բնույթական կույր տարերին՝ երաշտի պատառած թերաքիրության մարդակային Կոնգրեսին։

Հետապահերազմյան տնտեսական վերականգնման ու զարգացման մեծագույն դրվագությունների բնույթական կույր տարերին՝ երաշտի պատառած թերաքիրության մարդակային պայմաններում լայն բացվեցին Սովետական Հայաստանի սրբազն ունեցեցի սրտարաց բնույթելու անհարազատ նորիգոնների ներքո տարաբնակ, առժամապես հայրենազորել հայ հարազատների առաջ։ Անձուկ սահմաններով և ազգաբնակուրյամբ սակավարիվ Սովետական Հայաստանը հաղորակաւեց անհարաբնարելի բիւզանդական ու հայրենի նոր օջախները մասեց բազմահազար աստանդականների։ Բնախարենի Հայուրյունը անձնվիրաբար իրեն նեղ արեց և հարազատներին մեղ արեց։ Անհավատալի հրաշագործություն էր ամենակարև ժամանակամիջոցում հաղրանարեն անհարաբնարելին և հայրենատես ու հայրենաբնակ դարձնել բազմահազար բազմությունը Հայրենադարձների։ Անհավատալի հրաշագործություն է բվում տեսնել և համոզվել, որ պես-պես երկրներից եկած, տարամերժ կարգերում սեված, շահատիրական մանուրտում դաստիարակված հայրենադարձ ծողովաւրդը առաջանական հաղրանարեց հասարակական կենցաղի փոխանցման դժվարությունները և հարազատացակ սովետական իրավակարգի, սոցիալիստական հանրակենցաղի պայմաններին։

Մեր նոզին անհումապես հրեվում է, տեսնելով, թե ինչպես հայրենադարձ հարազատներս, որպես բրանչած մեղուներ, հայրենի հօդը ուժ դնելու առաջին խոկ ժամից կոռու ու կոփում են իրենց երջանիկ ապագայի հիմքները։ Պետական գործարաններում, թե կոյխոզային դաշտերում, վարչական թե տնտեսական հիմնարկներում, զիտուրյան կանառներում թե արվեստի տանարերում, հիմացն են առաջացնում հայագե նոր ժաղացիների ազնիվ աշխատանքը, ստեղծագործող օգին, երանակետ ժպիար, խինդն ու ծիծաղը։ Մաճկապարտեզ, ուսումնարան, Համալսարան, Ակադեմիա, գիտուրյան, արվեստի, լուսավորության և այլ բոլոր հիմնարկությունների ելույթների դրաները լայնարձակ բացվել են հայրենադարձ մասնակ-

ների, ուսումնատենչ պատահների և գիտուրյան ծարավի երիտասարդների առաջ: Այս ամենը, որ ասեցակ տարիների ներսական պայմանի և արդար ժրտինի գնով է նվաճված, առառուեն ի սպա է դրդում երեմնի «հայմանող» հայրենազուրկ. իսկ այժմ հայրենատեր լիբրավ քաղաքացիների:

Հոգեզմայլ է Սփյուտի պատմական Հայրենադարձը, որ իր մեծախորհուրդ վեհուրյամբ համարձեք է Երրայեցիների բիբիկան «Ելից»-ին: Հայ Սփյուտի Հայրենադարձը ոչ միայն հոգեզմայլ վախճանն է հայ տարագրուրյան, այլ և խոշորագույն կոռուսն Հայ Ազգահավաքի և հոգդանու ադրյուրը Հայ Ժողովրդի հոգեւոր միաձուման և Հայ Հայրենիքի, Հայրենական Պետուրյան եղորացման:

Գլ բացահայտ, թե զաղտնի, դավեր է յարում Հայ Սփյուտի Հայրենադարձի դեմ, նա կամա թե ակամա գորս է մնում Հայ Ժողովրդի ազգային-հոգեւոր միասնուրյունից: Ով թերեւամոռնեն թե շարակամոռն հակառակում է Հայ Հայրենադարձին, նա ուսունում է զինակից Հայ Ժողովրդի դամբի Քյազիմ Կարարելիների, Վատիկանի և ամակատար Աղուանյանների և աշխարհակալ դայախիների. որոնք փորձում են հայ տարագրելոց վարձկան զինախմբեր կազմակերակ և ստրկական աշխատանի իրավագույն քանակիներ:

Հայ մարդու սրբազն պարտականուրունն է վառ, անշէջ պահել Հայրենադարձի մեն զաղափարը Հայ Ժողովրդի մեջ, գորամիտ ինեն Ազգահավաքման հայրենասիրահան մեծ գործին, գուրզութե, պահել ու ծավակ համազգային խանդավառուրյունը և միաժամանակ ապահովել ու երաշխավարել Հայրենադարձի ծավալման տնտեսական, քաղաքական և բարոյական բոլոր կուժանները:

Հայ մարդը դատապարտված չէ մշտքենապես մնան «հայմանող» հայրենազուրկի անպատճակը վիճակում:

Հայր հերոսամարտիկ զաւակների որոշակ արյամք և աշխատավոր գալակների ազեկի ժրտինով սրբազնությամբ և արգավանդյան Հայրենիքի:

Հայրենադարձ հայրենասիրուրյան ուղիղ և արդար համբան է հանդիսանում:

Ե. ՀԱՄԱՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՂՐԱՅՐՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽԱՌԻԹՅՈՒՆ
ՈՒԾԱՅ ԳԱՎԱՅՐԱՆՔԻ ԽՏՐՈՒԹՅՈՒՆ:

Մխիրացական էք և ուրախակ Մեզ տեսնեն որ Հայաստանյաց Ազգային

նկեղեցու զավակներիս հետ միաշունչ ու միասիրու մեր նվիրական Ազգային Դատի ու ներգաղիքի հաղբանակի համար անկեղծուեն աշխատեցին և պայքարեցին նաև այլագավան հայագուները: Առանձնապես հիշատակուրյան և զավաճակի է արծանի ավետարանական ազգայինների, կրոնապետների և հոգեւոր հովիվների գործուն մասնակցուրյունը Համաշխարհային Հայկական Կոնգրեսի, Հայրենադարձի և ազգային այլ ձևեակուրյունների աշխատահիններին: Միու ողջուն մեր հոգեւոր Եղարաւներին: Մրտառուն է նաև լատինադավան ազգայինների գործակցուրյունը համագային խնդիրների արդարադատ լուծման համար, հակառակ նոզա կրոնական Պետերի դավադիր հորուրների: Տարիներ առաջ Մայր Հայրենինում, դարավոր քրնամու անարգ լուծի ներքո, ենրական անօրինակ հայածանեների ու շարուերի, այլադավան ազգայինների նիւրկա և երանի հայնիքը այսպահակ եկեղեցների հովանուն ապավինեցին և աշխարհիկ մեծերից փրկուրյուն աղերսեցին:

Աղետաբեր և ազգուրաց նիկու Թորոսովի շի ավանդներին հավատարիմ Անտոն Հասուններ բռնակալ ու դավադիր ույժերի օգնուրյամբ հանցափորձեցին Վատիկանի մեծատիրուրյանը ենրակել հայ Ժողովրդի ազնիվ զավակներին, խոսվեցին և փորուկեցին հայալատին կրոնական հատկածը, ոգի ի բոին ջանացին ազգայնուն դիմազրկել հայագուններին: Ի տիտուր իր ազգադակ ու զործի, տիրահոչակ Անտոն Հասունի կարդինալուրյան աստիճանուն վարձահատուցվեց, սակայն լատինադավ հարազաներից ջաներ մայրենի ազգային եկեղեցի դառնալով՝ հոգեպես մսիքարվեցին ու վերածնվեցին. իսկ կանոնապես լատինադավան զգացողները հարկադրեցին Վատիկանի հանանշի ուղին բռնել և հայագունների իրավունքներն ու զացմունքները գեր առեն ու առամապես հանաչել: Անտոն Հասունների անփառունակ դափնին հայանուն նոր կարդինալին և հանգիստ չի տախս և Հայ Դատի, Հայրենադարձի ուն ծառանալով, նա կամենում է սիրաշանն Վատիկանի ու ուղարկութեան մեծավորին և հանուանա աշխարհիկ Մեծերին, որոնք ծրագրեն են մշակում բնագանքին մասի և աշխատանիքի գաղուրյահն ստրկի վերածել իրավագութեան տարաքեակ հայագուններին: Մակայն մեծ է Հայրենիքի սեր, ազգահավաքման ու ազգասիրուրյան զգացմունքը նաև լատինադավան հարազաների հոգում: Անմանքուժող և ուղամանու Վատիկանի հայանուն գործակալներն անկարող

Են մարել կամ կորզել ազնիվ հայազուների հոգաց հայենասիրուրյան, ազգասիրուրյան, եղբայրուրյան նվիշական զգացմունքները: Ազատախոն, ազգային և ժողովրդական Հայ Եկեղեցուն խորը են կրոնական անհամբերատարուրյունն ու հայածանելքը: Մենք չենք փարանում հավատալ, որ վաղ թե ուշ, այլաշական հարազատներից շատ-շատերը Մայր Հայրենիքում կատանան իրենց հոգեռոր միիրարուրյունը և երշաբեկ կյանքը:

Արդարադատ Աստուծո օրինուրյունը բող անպակաս լինի մեր հարազատների զիսից:

Համայն Հայ ժողովրդի մեծագույն Մրավայր Ս. էջմիածնից Մեր բոլոր հարազատներին ի խորոց սրահ ամանորյա ողջույն Հայրական և օրինուրյուն Հայրապետական:

Զ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՅԱՎՈՒԹՅՈՒՆ ՀՅՈՒՐ-ԸՆԿԱՆ ԵՐԿՐՈՒԹԻՒՄ ՀԱՆԴԵՊ ԵՎ ԵԿԲԱՅՐԱԿԱՆ ՀԱՄԱՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԿԻՑ ԺՈՂՈՎՐԴԻՆԵՐԻ ՀԵՏ:

Ինչպիս միշտ անցյալում, հարգեցեք հյուրընկալ Երկրների անձնոնմխելիուրյունը ու պետական անկախուրյունը, եղբայրաբար և սիրով ապրեցեք ձեզ համակից ու հարեան ժողովուրդների ենու: Դուք ժամանակավոր հյուր էք այդ Երկրներում, հարգեցեք հյուրընկալ ժողովուրդների ազգային սրազան իրավունքները: Մի լինիք անպատվարեց գործիք աշխարհական օտարների դիվային դավերի և ոչ էլ կույր խաղայիք անպատախանառու արկածախնդիր հայ խմբակների ձեռնում: Խմասուրյուն ունեցեք տոկալ մինչ այն երանելի օրը, երբ Դուք կզունեք երջանիկ կայան ու երանելի կյանք ձեր Մայր Հայրենիքում, Բնաշխարհի հայրենաբնակ հարազատների զոգում: Սակավ չեն դեպքեր, որ արտաքին ույժերի սպառնով վերջերս հյուրընկալ երկրների Կոռավարուրյունները խախտում են ոչ միայն ազնիվ հյուրընկալուրյան վաղեմի ավանդները, այլ և ակնհայտ մեղանչում ի-

Ողջ լեռու, զորացեալ ի Հոգույն սրոյ և

րավունքի և արդարուրյան հանդեպ, ոտնանարում Հայ ժողովրդի և Հայ Ազգային Եկեղեցու դաւերով շարունակ այնքան հարգված և սրբազնութեած կարզն ու ավանդները: Կատարվող անարդարուրյուններն ու անիրավուրյունները բող շխոսվեն ձեր հոգին, հավատացած, որ դրա փորանցիկ մոլորուրյուններ են: Մենք հավատացած ենք, որ այդ նոր կառավարուրյունները կազատագրվեն օտարների թերադաներից և կրկին կորդեզրեն հյուրընկալ Պետուրյունների և ժողովուրդների դարձաւոր ազնիվ հաղաքականուրյունների ու վարժագիծների հանդեպ հայազն զավակներին, որոնք ի սկզբանն անտի իմաստուն առաքինուրյուն են ունեցել լինել Երախտապահու և անձնվեր բարեկամ հյուրընկալ ժողովուրդներին:

Թող Տիեզերքի Արարիշը արդարախոն և արդարադատ իմաստուրյուն պարզեց ժողովուրդներին ու կառավարուրյուններին, խաղաղուրյուն և եղբայրուրյուն հաստատի ամբողջ աշխաֆիում:

Հավատացյալ զավակներս,

Ազնիվաբար և բարեկենցաղ տոկացեք ձեր առաջամայ իշեաններուն մինչ երշանիկ ու փրկարար օրը Հայրենադարձի:

Խմաստուրյուն և ազնիվուրյուն ունեցեք մեալ հավատարիմ ձեր Մայր Հայրենիքին, Հայրենի Պետուրյան և Բնաշխարհի հայրենաբնակ հարազատ եղբայրներին, որոնք անձկան ձեր զալսարանն են սպասում:

Հավատարիմ մեացեք ձեր Ազգային հայրենի հինավուրց Եկեղեցուն և Մայր Առող Ս. էջմիածնին, որ ի տունչյան և ի զիշերի իր շերմենանդ աղորքներն է վերառանում առ Ամենաբարին՝ ազատուրյուն և Երշանկուրյուն պարզելու ձեզ:

Ամանուրյա ողջույն Հայրական և Երկնային օրինուրյուն Հայրապետական Մեր բարեպաշտ, հայրենասեր և ազնիվ զավակաց:

յաւէտ օրինեալ ի Տեառնէ և ի Մէջը. ամէն:

ԾԱ.ՑՐԱ.ԳՈՒՅՆ ՊԱ.ՏՐԻԱՐՔ-ԿԱ.ԹՈՂԻԿՈՍ

Ա.ՄԵՆԱՅՆ ՀԱ.ՑՈՒՑ 96-102 26

Տուաւ յորդորական կոնդակս

ի 1—ն Յունուարի 1948 Փրկչական ամի

և ի տոմարիս 037է

ի շորորդում ամի Հայրապետութեան Մերոյ

ի Ա. էջմիածին